

լու ատեն ճարելու համար իմ սա ցանկութեան: Այս տրամադրութիւնն էր, որ ապրումներու ընդարձակ հոսանքներն իսկ իմ մէջ, շուրջը, դուրսը ես դասաւորեցի իբր պատահարներու հանդէս մը: Ուրիշներ կը գրեն թերեւս բազմաթիւ ազդակներէ թելադրուած: Ես գրեցի միայն ու միայն մարդեր, այսինքն՝ մարդկային պատահարը սեւեռելու, փրկելու թերեւս վիճելի, բայց իրաւ, հաստատ առաջադրութեամբ: Այդ էր պատճառը թերեւս, որ ըլլամ Մաթիկը մտիկ ըրած:

Տեղի տուի իրեն, ուզածէն աւելի իսկ, երբ սկսաւ իր յեղումը. կոհակ-կոհակ գաղափար, տեսութիւն, վարդապետութիւն թափելով վրաս, տառապէս ողողելով իմ պատանիի խանդավառ հետաքրքրութիւնս արկածէն ու վտանգէն, իմաստէն ու կեանքէն, պատմութենէն, ինչպէս երազէն: Հսկայ լուղորդ այդ մեծ ջուրերուն վրայ, անիկա կը յոգնէր ո՛չ թէ կեանքէն, չարժամէն, այլ՝ հանգիստէն: Ու հանգիստը պարզ բառ է հոս. այսինքն՝ ա՛յն պահը, երբ փոխանակ տխրեցողի, ըլլար ստիպուած ինծի սեւեռելու պատառ մը կեանք, ապրուած իրաւ, ան ալ՝ ծամծուած, դժկամ ու յիմար:

Աւանդութիւնը կ'ուզէ, որ ամէն Աքիլէս կրունկ մը ունենայ: Խօսքն ալ՝ կրո՛ւնկը Մելիքխանեանին: Այնքան տարուած իր առաքելութեան միստիքէն, այնքան ինքզինքը պարսպած մարդոց միջին հրայրքներէն, փակած՝ իր զգայարանքները աշխարհի ամէնէն աւագ թելադրանքներուն, ծորումներուն, անիկա մերկ էր մօրէ ծնած տղու մը նման խօսքի հրայրքին դէմ: Ուրիշ ոչ մէկ ճամբայ, որպէսզի ճարուէին գիծերը, տարրերը, որոնցմէ կազմուած է իր սա կենդանագիրը: Առաջին իսկ օրուան վախճանին, յստակ էր իմ դէմ երիտասարդը, որմէ պիտի գային, ինչպէս լուսանկարի մը ապակիին, հոգեղէն անոր կազմը, ջիղերու ցանցին շուրջ: Իմ՝ դերը եղաւ օգտուիլ կրնալ այդ հանգամանքէն: Այդ երիտասարդը ինքզինքը տուաւ, առանց իսկ կասկածելու, որովհետեւ խօսիլը ամէն բան էր անոր, հոմանիշ՝ աւելորդ չէ ըսել շունչ առ-